ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի ավագանու Երևան համայնքում տեղական տուրքերի 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու և տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին որոշումների նախագծերի վերաբերյալ

<u>Երևան համայնքում տեղական տուրքերի 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին որոշման նախագիծ</u>

Երևան համայնքում տեղական տուրքերի 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին Երևանի ավագանու որոշման նախագծի հավելվածի 6-րդ կետով նախատեսվում է Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքը սահմանել 600,000 դրամ, իսկ 7-րդ կետով՝ նախատեսվում է Երևանի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանել 87,500 դրամ:

Հասկանալի չէ, թե Երևան համայնքում տեղական տուրքերի 2023 թվականի դրույքաչափերը սահմանող հավելվածի 6-րդ, 7-րդ կետերում ամրագրված դրույքաչափերը որքանո՞վ են ներառել թունավոր նյութերի արտահոսքի դեպքում շրջակա միջավայրի վրա գոյացնող բեռը ֆինանսական արտահայտմամբ և ինչպե՞ս են դրանք ներառվել սահմանված արժեքի մեջ:

Առաջարկ.

1. Տեղեկանքում ներառել ռիսկերի գնահատման արդյունքում կատարված կանխատեսումների հիման վրա գնահատված բնապահպանական բեռի ֆինանսական արտահայտմամբ դրույքաչափերում ներառված համամասնությունը (օրինակ՝ տոկոսային արտահայտմամբ):

<u>Երևան համայնքում 2023 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին որոշման նախագիծ</u>

2023 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին որոշման նախագծով Երևանի վարչական տարածքում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար, որոնց 2022 թվականի հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 115 միլիոն դրամը, 2023 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափերի նկատմամբ նախատեսվում

է կիրառել դրույքաչափի նվազեցման արտոնություններ: Մասնավորապես, 1-ին կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված է, որ Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի 58.34 տոկոսի չափով, իսկ նույն կետի 3-րդ պարբերությամբ՝ Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի 58.34 տոկոսի չափով:

Այս արտոնությունը որևէ կերպ հիմնավորված չէ և հակասում է Երևանի զարգացման ծրագրով սահմանված նպատակներին, մասնավորապես՝ բնակչության բարեկեցությունը ապահովելու, մաքուր ու կանաչ քաղաք ունենալու, անվտանգ կյանք ունենալու առումով:

Առաջարկ.

1. 2023 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին որոշման նախագծում առաջարկվում է հանել 1.2, 1.3 կետերը, քանի որ հստակ չէ, թե ինչու բնապահպանական բեռ ունեցող տնտեսվարողները պետք է ստանան նման արտոնություն:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն